ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ, 1990թ. օգոստոսի 23-ը Հայաստանի Հանրապետության պատմության ամենավճռորոշ և կարևոր ամսաթիվն է, քանզի 33 տարի առաջ հենց այս օրը հայ ժողովուրդը՝ համախմբված անկախ ու ազատ հայրենիք ունենալու գաղափարի շուրջը, հանրաքվեի միջոցով հաստատեց ազատ ու ինքնիշխան պետություն ունենալու իր իրավունքը, որն օժտված է պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ և լիիրավությամբ:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ընդունման օրվա առիթով շնորհավորում եմ բոլորիս:

Այս 33 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունն անցել է պատերազմների բովով, քանիցս ծնկի է բերել իր թշնամիներին, ունեցել է բազում հաղթանակներ և պահպանել է իր ազգային նկարագիրը: Այսօր, առավել քան երբևէ, մեր ազատության ու անկախության պաշտպանությունը յուրաքանչյուր սրտացավ հայի համար պետք է լինի այն օրակարգային հարցը, որին ուղղված պիտի լինեն մեր բոլոր ջանքերը: Մեկ անգամ ևս այս կարևորագույն օրվա համար շնորհավորում եմ բոլորիս: Մաղթում եմ ուժ, կորով և միասնականություն՝ մեր պետականությունը պահպանելու և մեր սրբազան Հայրենիքի պաշտպանության համար:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան՝